ԱՊՊԱ համակարգը 2014 թվականին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ

Բովանդակություն

- ԱՊՊԱ ապահովագրավճարները
- Հատուցումները ԱՊՊԱ համակարգում
- Համակարգի վնասաբերությունը
- ԱՊՊԱ համակարգի ներգրավվածությունը

ԱՊՊԱ ապահովագրավճարները

- ԱՊՊԱ ոլորտում հիմնական և բազային ապահովագրավճարների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը, ինչպես նաև ռիսկային գործակիցների թույլատրելի արժեքների չափերը սահմանվում են Բյուրոյի կողմից: Հարկ է նշել, որ վերջին անգամ Բյուրոյի **RL 1-009** կանոնները, համաձայն որոնց սահմանվում են վերոնշյալ ցուցանիշները, հաստատվել են **2014** թվականի դեկտեմբերին:

- Արդյունքում՝ դեռևս **2010** թվականին սահմանված ապահովագրավճարները փոփոխության չեն ենթարկվել:

Հաշվեգրված ապահովագրավճարները

2014 թվականի հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը գործունեության ամբողջ ընթացքում հասել է իր առավելագույնին։

Ընդհանուր առմամբ 2014 թվականի ընթացքում հաշվեգրվել է մոտ 17.8 մլրդ դրամ ապահովագրավճար:

Երեք առավելագույն չափի հաշվեգրված ապահովագրավճար ունեցող ընկերությունները հետևյալն են՝



Նախորդ տարիների համեմատական գրաֆիկը ունի հետևյալ տեսքը (ՀՀ դրամ)



Հաստատումները ԱՊՊԱ համակարգում

2014 թվականի բավարարված դիմումները և նրանց գծով կատարված հատուցումները

2014 թվականի ընթացքում ԱՊՊԱ համակարգում կարգավորվել է 51,143 դիմում, որից 48,714-ը գույքային վնասների գծով, իսկ 2,166-ը՝ անձնական վնասների գծով: Անձնական վնասներից 99-ը եղել են մահվան ելքով:



2014 թվականի համար միջին հատուցման չափը կազմել է 195,921 ՀՀ դրամ, իսկ միջին հատուցման չափը ըստ ապահովագրական ընկերությունների ունի հետևյալ տեսքը՝



*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գարանտ—Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ապահովագրական գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել, ինչպես նաև դադարել է նրա անդամությունը Բյուրոյին՝ սույն տողում տվյալները ներկայացված են 2014 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ:

Կարգավորված դիմումների քանակը ըստ Բյուրոյի և ապահովագրական ընկերությունների ունի հետևյալ տեսքը՝



Վնասաբերությունը 2014 թվականին

Համակարգի վնասաբերությունը 2014 թվականի ընթացքում ունեցել է հետևյալ դինամիկան՝



Վնասաբերության ցուցանիշի հաշվարկման հիմքում ընկած են ֆինանսական ցուցանիշներ, այդ թվում՝ ապահովագրավճարները, վճարված և վճարման ենթակա հատուցումները, ՆՉՊՊ, ՏՉՊՊ, ՉԱՊ: Հարկ է նշել, որ վնասաբերության ցուցանիշը հաշվարկվում է տարեկան կտրվածքով, ինչը 2014 թվականի համար կազմել է 62%:

2013 թվականի համեմատական գրաֆիկը ունի հետևյալ տեսքը՝



Ցուցանիշը ըստ ապահովագրական ընկերությունների՝



ԱՊՊԱ համակարգի ներգրավվածությունը

Մեկ տարվա ընթացքում կնքված ԱՊՊԱ պայմանագրերի քանակով 2014 թվականը եղել է առաջատար: 2011 թվականին ցուցանիշը կազմել է մոտ 352 հազար, 2012-ին՝ մոտ 601 հազար, 2013-ին՝ 771 հազար:



- 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ավտոտրանսպորտային միջոցների քանակը կազմել է 464,061:
- Նախորդ տարվա նույն օրվա դրությամբ ունեցած ցուցանիշի համեմատ տվյալ ցուցանիշը աճել է 56,638-ով: